**1273.** *ԽԱՉՔԱՐ, կանգնած է ս. Բեթղեհեմ եկեղեցու պատին կից, պատվանդանի վրա. հյուսիսային կողին և խաչի ստորին մասում.*

ԿՄ
ԱՒՆ
Ա̄ՅԵ
ՍՄԻ
ՃՂ
ԱՏԵ
··Մ
ՈՒՍ ԿԱԿՆԵՑԻ ՁԽԱ
ԻՆԻ ՉՍԻՆՁԵ··ՂԲԱ
ՄՌ ՐՑԻՄՈ · ԻԹՎՉԽԱ
ՈՒՉ
Ո·ՔՃ
ՐԴԻ
ՄԳ
ԻՍ··

ԿԱՄ|ԱՒՆ| Ա̅Յ̅. Ե|Ս ՄԻ[Ր]|ԱՆՇ|ԱՀ Ե|Ր[Ի] ԱՄ|ՈՒՍ|ԻՆ Ի|Մ Ռ|ՍՒՉ|ՈՒՔԱՆ|, ՈՐԴԻ| ՍԱՐԳԻՍ[Ի]|, ԿԱՆԿՆԵՑԻ ՉԽԱ|ՉՍ ԻՆՁ Ե[Ր]Ի Ե[Ղ]ԲԱ[Ր]Ց ԻՄՈ[Ց]. Ի Թ̅Վ̅. :ՉԽԱ: (1292):

**1274.** *ԽԱՉՔԱՐ, կանգնած բնական ժայռաբեկորի վրա, գտնվում է գյուղի հարավային եզրին, ջրանցքի ափին. շրջանակներին 6 տող.*

| | |
|---|---|
| ՅԱ✝Ռ | ·✝Ա̄ՅԵ |
| ՍՄԻ | ՐԱ·· |
| ՇԱ | ՅԿԱ |
| ԵՅԻԽ | ՄԻՐ |
| ՂԵՈՒ | ՄԷՐԻ |
| ՂԵ:ԻՄՈՑ | ՙՈՂՈՒՍ |

ՅԱՆՈՒ[Ն] Ա̅Յ̅ Ե|Ս ՄԻՐԱ[Ն]|ՇԱՅ ԿԱՆ[Ի]ԳՆ[Ի]ԵՑԻ Խ[Ա]ՉՍ[Ի] . . .

Ծանոթ. *Ներքևի երեք տողերը խիստ մաշված են և անորոշ։*

*ՄԻՐԱՆՇԱՀ անվան գոյությունը ապացույց է նախորդին ժամանակակից լինելը՝* XIII *դարի վերջ։*

## ԶԱՌՔԵՆԴ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ԶԱՐԶԻԲԻՐ)

*Գյուղի հին անունն անհայտ է. տեղագիր հեղինակները հիշատակում են գյուղում գտնվող մի եկեղեցու մասին, որի սեղանի մոտ դրված են եղել երկու գեղաքանդակ խաչքարեր՝ մեկն արձանագրությամբ՝ 1514 թ.։ Դեռևս Սմբատյանցի ժամանակ այդ եկեղեցին կիսավեր է եղել, իսկ այժմ՝ չկա, բայց գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ արևելք, ձորի վերին մասում գտնվում են գյուղատեղի ավերակները և նրանց մոտ՝ բլրի վրա գերեզմանատուն, ուր կան տապանաքարեր՝ վարպետորեն քանդակված կենցաղային տեսարաններով և մի քանի գեղաքանդակ խաչքարեր, ամենահինը 1552 թվական (№ 1275)։*

*Ժողովածուում այստեղի հուշարձաններից ամփոփված վեց արձանագրություններից միայն մեկն է Նախկինում հրատարակված եղել և որն այժմ տեղում չկա։*

**1275.** ***ԽԱՉՔԱՐ***, *մեծ, գեղաքանդակ, կանգնած է գյուղատեղու գերեզմանատան կենտրոնում, թեքված դեպի առաջ, հարավային կողին և խաչի տակին.*



ԵՍ ՈՎ|ՔԷՍ ՈՒՎ|ՈՒՍՍ, ԳԵ|ԴԻՍ ԱՌ|ԱՋՆՈՐԴ|, ⌈Կ⌉ԱՄԱ⌊ԻՆ⌋
Ա.Ց. ⌈Կ⌉|ԱՆԿՆԵՑ⌈Ի⌉| ԽԱՉՍ ԲԱ|ՐԵԽԱԻՍ| ՀԱԻՐՆ ԻՄ ՄԻՐԻՆ։
ԹՎ. ։ՌԱ։ (1552)։ ԻՇԵՑԷՔ ԳԾՈՂ ԱՆԴՈՆ ԷՐԷՑՍ։

Ծանոթ. *Խաչքարի դիմաց կա տապանաքար՝ առանց տապանագրի։*

Լառաեկ. 258։

**1276.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ***, *մեծ, օրորոցաձև, վերևում բարձ. հարավային երեսին՝ հեծյալ, կողքին՝ կապարճ, նիզակով հարվածում է ձիու ոտների տակ գալարվող վիշապին՝ երախից, դիմացը մարդ՝ մի ձեռքին հաց, մյուսին՝ գավ. տապանաքարի մյուս ծայրին մի այլ մարդ նետը արձակում է դիմացի եղջերուի կողմը. ներքևում մեծ փաթեթ կազմած վիշապ, որն ունի երկու գլուխ և կլանում է երկու կենդանիներ՝ գառ և այծ։ Վերևի բարձերի վրա եղծված 2 տող.*

···ՅՈՒՔԷՍԿՆԽՆՇՈՐԴԻ······ՐԽՍ
ԻՆ

Ե⌈Ս⌉ ՈՒՔԷՍ Կ⌊Ա⌋Ն⌊ԿՆԵՑԻ⌋
Խ⌊Ա⌋ՉՍ ՈՐԴԻ ԻՄ....

Ծանոթ. *Գանվում է նախորդի մոտ. նույն ընտանիքին է պատկանում և նույն ՈՒՔԷՍԻ շինել տվածն է. ժամանակակից է նախորդին՝* XVI *դարի կես։*

**1277.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ***, *օրորոցաձև, հարավային երեսին 3 խորան, առաջինի մեջ նստած մարդ, որը երկլարանի սազ է նվագում, կողքին երկփողանի սրինգ կա դրված։ Երկրորդ խորանի մեջ նստած մարդ, որը դափ է նվագում, կողքին նույնպես երկփողանի սրինգ. երրորդի մեջ մեծ գավ. հյուսիսային կողին երկու հեծյալ, մեկի ձեռքին տապար, մյուսի՝ դաշույն, հարձակվել են եղջերուի վրա. երկու երեսներին 5 տող.*




ՋԱՋԱԼԻՋԱՑԷՍ| ԿԱՆ⌊ԿՆԵՑԻ⌋ ԽԱՉՍ
ՈՐԴԻ|Ք ԻՄ ՋՈՒՐԱ|ՊԻՆ. ԻՇԵՑԷՔ.
ԹՎ. ։Ռ։ (1551)։

Ծանոթ. *Հյուսիսային կողին միայն թվականն է։*

**1278.** *ԽԱՉՔԱՐ, գեղաքանդակ, գտնվում է գերեզմանատան արևելյան մասում, հարավային կողին և Թևերի արանքներում.*

ԵՍ
ՃԱՆ
ԱԼՂ
ԱՅԿՆ
ԽՆՍԳ
ԻՍՊԷ
ՏԻՂ
ԴԱ
ԿՔ
ԱՍ
ԱՐ
ՑՈ
ՂՈ
Ի




ԵՍ ՃԱՆԱԼՇԱՑ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ԶԻՍՊԼՏԻՆ ԻՇԱԴԱԿ ՔԱՍՊԱՐ. ԱԾ. ՈՂՈՐՄԻ: ԹՎ. :ՌԱ:
(1552):

**1279.** *ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է նախորդ խաչքարի դիմաց. վրան երկու տող.*

ԱԾՈՂՈՐՄԻ ԿՈՒԼԱՊԻՆ

ԱԾ. ՈՂՈՐՄԻ ԳՈՒԼԱՊԻՆ:

**1280.** *ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել գյուղամիջում, ավերակ եկեղեցու մոտ.*

Կանգնեցաւ սուրբ խաչս Աւանէսին. թվ. :ՋԿԳ: (1514):

*Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 28։*

## ԱՋԻՋԼՈՒ (ԱՆՑՑԱԼՈՒՄ՝ ՄԵԾ ԴԱՐԱԴԼՈՑՈՒՆ)

**1281.** *ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ՎՐԱ, որը գտնվելիս է եղել այս նույն բլրի վրա, ավերակ եկեղեցու մոտ.*

Այս է նանգիստ Խուդանի որդի պարոն Իւանին. թվ. :ՌՃԻԷ: (1678):

*Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 20։*

**1282. ԽԱԶՓԱՐ**, *գեղաքանդակ, կանգնած է գյուղամիջի բլուրի վրա. մշակված է նաև արևելյան երեսը։ Ճակատի շրջանակներին և թիկունքին։*



*ՃԱԿԱՏԻՆ.*

ՍԲ. ԽԱՉ|Ս ԲԱՐԷԽՈՍ ՏՐ ՍՀԱԿԻՆ. ԵՍ ՕՀ|ԱՆՍ ԿԱԶՄՈՂ| ԹՎ. ։ՌՃԽԷ։ (1698)։

*ԹԻԿՈՒՆՔԻՆ.*

ՇՆԱՒՐՀԻ[Ի]Ն ԱՅ| ԵՍ ԹԱՄՐԱԶՍ, ՏՐ. Մ|ՈՒՍԷՍ, ԱԼԱՑՊԷԿ|Ս, ՊԱՐԱԳՈՒԶՍ ՄԻ| ԱՊԱՆ ԿԱ[Ն]ԿՆԵՑԻ[Ն]Ք ՍԲ. ԽԱ|ՉՍ ԲԱՐԵԽՈՍ ՏՐ ՍՀԱԿ|ԻՆ, ՀՕ[Ր] ՄԵՐՈՑ ԵՒ ՄԱՐ Մ|ԵՐ ՀՄԱՑԻՆ, ԹՈՒ|Ն ԻՍՐԱՑԵԼԻՆ. ԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՍ|. Թ.։

Ծանոթ. *Սղումները և անկանոնությունները պահպանել ենք, որպես խոսակցական լեզվի արտահայտություն։*

*Վերջին ։Թ։ տառով աղեցել են թվականը գրել, բայց այն տեղափոխել են ճակատին։*

*Հրատարակիչների մոտ արձանագրությունը կրճատված և աղավաղված է։*

***Հրատ. Սմբատյանց, 630։ Լալայան, XIX, 20։***

ՏԻՇԿԱՑԱ

*Հին անունն անհայտ է. գյուղի հյուսիսային եզրին կա սպիտակ հողից և քարից կազմըված մի բարձր բլուր, որի գագաթին մնում են հին, փոքր ամրոցի հիմնապատերը. որա տարածքում կան ավերակ եկեղեցու մնացորդներ և մի քանի տապանաքարեր ու խաչքարեր, որոնցից երկուսի վրա կան խիստ ջարդոտված արձանագրություններ, մեկը ։ՌՂ։ թվականով (№ 1284)։*

*Լալայանը հիշատակում է գյուղամիջում մի մեծ եկեղեցու հիմնապատերը և շուրջը խաչքարեր՝* XVI *դարի, որոնք այժմ չկան։ Դեպի լիճ ձգվող դաշտի մեջ կա մի փոքր եկեղեցի, որի մոտ ընկած խաչքարի վրա նկատելի է ։Զ։ թվականը*[1]*։*

*Մեր գտած երկու արձանագրության մնացորդները հրատարակվում են առաջին անգամ։*

**1283. ԽԱԶՓԱՐ**, *գեղաքանդակ, գտնվում է գյուղի հյուսիսային եզրին, բլրի տակ գտնվող ավերակ եկեղեցու մոտ, կանգուն է, ջարդոտված ճակատին մնացել են արձանագրության մասերը, 3 տող.*



...Կ[Ա]ՄԱՒՆ ԱՑ ԵՍ [Ի]ՎԱ[Ր]ԴԱՆ....| ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ՀՈԳ[Ո] ՓՐԿՈՒԹԵ. ՀԱՒՐ [Ի]ՄՈ...

**Լատանկ. 259**

[1] «Ազգ. հանդ.», XIX, 24...